## ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Հայոց քաղաք դուն մեծ Կեռլա,
Առանց ինծիկ հիմպիկ մընայ.
Չէ ես մօտէդ հեռու կերթամ,
Հայոց աչիչ կու հեռանամ։

Աստր համար թարով կեցիր,
Ինծիմով ալ՝ ա՛լ քիչ եղիր.
Կերթամ մօտէդ օտար երկիր,
Մակար թէ դուն զիս հոս ասիր։

Պէլքիմ պ՚ասիս ինչու կերթամ
Հեռու, մօտէդ կօտարանամ,
Աղկա քաղաք մուտ ես կանիս —
Կենալու տուն հոն կի նայիմ։

Ա՛ն ալ պ՚ասիս աղէկ գիտիմ,
Թէ ես մէջըդ ընծայիլ իմ,
Տուն ու տեղով զիս տոիլ իս,
Ամէն ցեղէ պարգաւըիլ իս.

Ուներ ալալ ի՞նչ տանելու,
Կեռլա քաղաք ինձ յայտնելու.
Ասա՛, ինչա՞ կուզիս ինծիկ.
Չէ ես պ՚ասիմ թարով կեցիք։

Թէ որ անդուն ինծի ասիս,
Հայոց ժամեր թէ դուն ունիս,
Դատաւըրրաք աղէկ Հայեր,
Ջոճա պանով պագըրկընեեր։

Չուը ի ինծիկ ասոնք կասիս,
Պարապ կոլաճօզան կանիս.
Չէ ես զքումէ կի թամնուիմ —
Եկօ նըմա տա համբուրիմ։

Բայց ա՛լ տալ քանց տա երթամ,
Մօտէդ Կեռլա ես հեռանամ,
Լըսէ դուն ըզպաճըոներըս,
Սրտիս չատ ցեղ կսկըծներըս։

Հաւաքեց՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ
(Հունգար. «Armenia».

digitised by A.R.A.R.@